

ՏԱՐԵԼԻՑ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ` ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՄԲՈՂՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Օգոստոսի 14-ին լրացավ Արխագիայում եղբայրասպան պատերազմի 25-ամյակը: Քառորդ դար առաջ, այդ օրը, վրացական զորքերը Արխագիա մուտք գործեցին երկաթուղային հաղորդակցության անվտանգության ապահովման նպատակով: Օրը սկիզբ դարձավ լայնամասշտաբ մարտական գործողությունների: Տասներեք ամիս եւ տասներեք օր տեւած եղբայրասպան պատերազմի արդյունքում երկու կողմը զոհ տվեց տասնյակ հազարավոր մարդկանց, շուրջ 300 հազար մարդ ձեռք բերեց փախստականի կարգավիճակ:



նության համար զոհվածների հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցեցին: Օրվա առիթով Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հատուկ ուղերձում նշեց. «Խորապես հավատում եմ, որ կգա ժամանակ, երբ մենք, արխագների եւ օսերի հետ միասին, ձեռնամուխ կլինենք հզոր, զարգացած, ժողովրդավարական եւ խաղաղասիրական պետության շինարարությանը, որտեղ պաշտպանված կլինի յուրաքանչյուրի անվտանգությունը» (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Օգոստոսի 14-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի

օրենսդիր եւ գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներն այցելեցին երկրի տարածքային ամբողջակա-

«ԴԻԴԳՈՐՈՐԲԱ - 2017»

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԿԼԻՆԵՆՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԵՐԲ ՎՐԱՍՏԱՆԸ ՀՅՈՐ ԿԼԻՆԻ»

Օգոստոսի 12-ին, Թեթրիճղարոյի մունիցիպալիտետի Դիդգորրոբի դաշտավայրում, նշվեց ավանդական «Դիդգորրոբ» տոնը: Միջոցառումն անցկացվեց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, Վրաստանի կառավարության, Վրաստանի պաշտպանության նախարարության, Թբիլիսիի քաղաքապետարանի, Քվեմո Քարթլիի նահանգապետարանի եւ տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցվածքի նախարարության աջակցությամբ:



Այդ օրը միջոցառմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի կառավարության անդամներն ու Քվեմո Քարթլիի երկրամասային վարչության ներկայացուցիչները: Հա-

տուկ այդ օրվա համար, տարբեր թատրոնների դերասանների մասնակցությամբ, հանրության առջեւ հառնեց 1121 թվականի Վրաստանը: Միջոցառման շրջա-

նակներում՝ կազմակերպվեցին մրցույթներ, մշակութային եւ մարզական միջոցառումներ: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՊԱՐԳԵՎՆԵՐ` ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին պարգևներ հանձնեց այն դպրոցականներին, ովքեր 2016-2017 ուսումնական տարում հաջողությամբ հանդես են եկել միջազգային օլիմպիադաներում:

Նշենք, որ վրաց դպրոցականները միջազգային առարկայական օլիմպիադաներում հինգ առարկաների մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, տեղեկատվության եւ կենսաբանության, մրցույթներում նվաճեցին տարբեր արժողության 14 մեդալներ:

Օլիմպիադայում հաղթանակած դպրոցականների պարգևատրման արարողությանը ներկա էին Վրաստանի փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, փոխնախարարներ, դպրոցականների ծնողներ, ինչպես նաև դպրոցների ուսուցիչներ ու տնօրեններ:

Շնորհավորելով դպրոցականներին, վարչապետը նշեց, որ կրթությունը հանդիսանում է երկրի

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԱԽԱԳԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՐԴԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» ՆԱԽԱԳԻԾԸ

Օգոստոսի 16-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Բազալեթիի ամառային դպրոցի մասնակից ուսանողներին եւ բարձր դասարանցիներին, ներկայացրեց «Ողջ Վրաստանի հետ կարդա սահմանադրությունը» նախագիծը:



Գիորգի Մարգվելաշվիլին ուսանողների եւ բարձր դասարանցիների հետ զրույցում, ուշադրություն բեւեռեց սահմանադրության հիմնարար արժեքների ու դրանց պաշտպանության անհրաժեշտության վրա: Նա անդրադարձավ նաև Սահմանադրության օրվան, որը երկրում նշվում է օգոստոսի 24-ին եւ մանրամասն ներկայացրեց հենց այդ օրը մեկնարկած «Ողջ Վրաստանի հետ

կարդա սահմանադրությունը» նախագծի քարոզարշավը: Էլեկտրոնային ծրագրի միջոցով Վրաստանի բոլոր քաղաքացիները, ովքեր կցանկանան գրանցել տեսահատվածներ Վրաստանի գործող սահմանադրությունից, կարող են օգտվել www.constitution.ge կայքէջից: Նշենք, որ Վրաստանում 1995 թվականից Սահմանադրության օրը նշվում է օգոստոսի 24-ին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԾԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ-ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆ, ԱՈՍՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՅ ԱՈՍՆՅ՝ ԱՐԳՅՈՒՆՔԻ

Օգոստոսի 18-ին, Վրաստանի խորհրդարանի Թբիլիսիի շենքում, կառավարող թիմի խորհրդարանական մեծամասնության եւ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների միջեւ, սահմանադրական փոփոխությունների հարցով, կայացավ խորհրդատվություն: Ինչպես հանդիպման սկզբին հայտարարեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն, նոր խորհրդատվությունների արդյունքում սահմանադրական փոփոխությունների հարցում իրենք կհասնեն համաձայնության: Սակայն, մեծամասնություն-ընդդիմություն առաջին հանդիպումն ավարտվեց առանց արդյունքի, թեպետ կողմերը համաձայնվեցին խորհրդատվությունների շարունակության անհրաժեշտության հարցում: Նշենք, որ ընդդիմությունը բարձրացրել էր նախագահի անմիջական ընտրության, ընտրական համակարգի փոփոխության եւ 2020 թվականի համար մեծամասնական ընտրակարգի վերացման պահանջը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԲԱՂՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՅ ԵՏ ԵՆ ՄՆՈՒՄ»



Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, երկրի գյուղական դպրոցները բավական չափով են մնում քաղաքի դպրոցներից, իսկ ազգային փոքրամասնությունների դպրոցներն էլ՝ ավելի վատ վիճակում են:

Ինչպես նշեց նախարարը, Թբիլիսիի կենտրոնում գործող դպրոցները գրեթե լրիվությամբ ապահովում են եվրոպական կրթությունը, այն ժամանակ, երբ այդ որակն անհասանելի է գյուղական դպրոցների համար: Ալեք-

սանդր Ջեջելավանի խոսքով, այդ ամենն անմիջականորեն շղթայակցված է մանկավարժների հարցի հետ: «Ամենատագնապալի ցուցանիշը, ինչը բա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՇՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

ու տնտեսական բարորությունը, քաղաքական իրավունքները, կապիտալի բոլորի ազգային, կրոնական եւ նշակութային ինքնությունը, եւ դա կղանա առաջընթացի պայման,- ասված է նախագահի հայտարարության մեջ:


Իր հերթին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խոսելով Աբխազի-

այում եղբայրասպան պատերազմի մասին, ցավով նշեց, որ այն ժամանակ Վրաստանը չհաջողեցրեց կանխել եղբայրասպանությունը: «Օգոստոսի 14-ը Վրաստանի նորագույն պատմության ողբերգական օրն է: Քսանհիդզ տարի առաջ՝ մենք չկարողացանք կանխել եղբայրասպան պատերազմը: Մեր եւ մեր եղբայր աբխազների միջեւ արյունահեղությունը հանգեցրեց ծան-

րագույն հետեւանքների: Այդ հետեւանքների ծանրությունը, ինչպես վրացիների, այնպես էլ աբխազների համար այսօր ավելի քան ակնհայտ է: Մեր համատեղ գոյակցության պատմությունն օրինակելի է, եւ մենք իրավունք չունենք ապրել ձեւավորված ներկայիս իրականության մեջ: Մեր միջեւ չպետք է կանգնած լինի օտար ուժ, դա կործանարար է եւ վրացիների, եւ

աբխազների, եւ մեր երեխաների ապագայի համար:

Հուսով եմ, որ մենք կկարողանանք ուղղել այդ մեծ սխալը, եւ մոտ ժամանակներում կկարողանանք գրավել մեր աբխազ եղբայրների սիրտը եւ շարունակել ապրել դարավոր սիրո ու փոխհարգանքի պայմաններում՝ հզոր Վրաստանում», - ասված է վարչապետի հայտարարությունում:



ԻՄՊԱՆԻԱ

ԱՐԱՐԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ՝ ԲԱՐՍԵԼՈՆԱՅՈՒՄ

Օգոստոսի 17-ի երեկոյան Բարսելոնայի Ռամբլայի ճեմուղի, որը մշտապես լեվելեցուն է ինչպես տեղի բնակիչներով, այնպես էլ զբոսաշրջիկներով, ֆուրգոն է մխրճվել: Վրաերթի ենթարկելով մարդկանց, այն զիզգազներով ընթացել է ժամում շուրջ 80 կիլոմետր արագությամբ՝ ավելի քան 500 մետր, եւ կանգ առել Բոկերիայի հրապարակում: Չոկվել է 13 մարդ: Վիրավորների թիվը մոտենում է 130-ի, նրանցից 15-ը ծանր վիճակում են: Ահաբեկչության արդյունքում տուժել է ավելի քան 34 երկրի քաղաքացի: Վարորդը դեպքի վայրից փախուստի է դիմել:

Տեղի ունեցածը ոստիկանությունը գնահատել է որպես ահաբեկչություն:

Այս ահաբեկչական գործողությունն Իսպանիայում ամենաարյունալին է դարձել 2004 թվականի մարտից ի վեր, երբ իսլամիստ զինյալները ռումբեր էին դրել Մադրիդի արվարձանային գնացքներում: Պայթյունի զոհ էր դարձել 191 մարդ եւ ավելի քան 1800-ը վնասվածքներ եւ խեղումներ ստացել:

Օգոստոսի լույս 18-ի գիշերն Իսպանիայի ոստիկանությունը հայտարարել է երկրորդ ահաբեկչության կանխման մասին, որը պետք է կատարվեր միեւնույն սխեմայով, ինչ Բարսելոնայից, Կամբրիլես ժովա-մերձ քաղաքում՝ Բարսելոնայից 100 կիլոմետր հարավ:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ԶՈՐՍ ՏԱՐԻ ԱՆՏ՝ ԵՂԻՍԱՐԵԹ ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԻՑ ԿՅՐԱՄԱՐՎԻ

Մեծ Բրիտանիայի Եղիսարեթ Բ թագուհին մտադիր է չորս տարի հետո՝ հրաժարվել գահից, երբ լրանա իր 95 տարին: Այդ մասին հայտնել է Mirror հրատարակությունը՝ վկայակոչելով արքունիքին մոտ աղբյուրներ:

Նրանց տեղեկություններով՝ արդեն սկսվել է անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստումը գահը ժառանգորդին՝ Եղիսարեթի ավագ որդուն՝ 68-ամյա արքայազն Չառլզին հանձնելու համար:

Նշենք, որ Եղիսարեթ Բ-ն գահ է բարձրացել 1952 թվականին: Ներկա դրությամբ, նա աշխարհում ամենաերկար կառավարած միապետն է: Նրա որդի արքայազն Չառլզը գահ բարձրանալու դեպքում կդառնա ամենատարիքավոր միապետը, որը երբեք էլ թագադրվել է Մեծ Բրիտանիայում:

«ԴԻՂՈՐՈՐԲԱ - 2017»

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԿԼԻՆԵՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԵՐԲ ՎՐԱՍՏԱՆԸ ՀՉՈՐ ԿԼԻՆԻ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, շնորհավորելով ներկաներին «Դիղգորբա» տոնի կապակցությամբ, նշեց, որ Վրաստանի հզորությունը ինչպես դարեր առաջ, այնպես էլ այսօր, միասնության մեջ է: «Մենք էլ չենք երգի՝ Վրաստանը մեծ է եղել», մենք կերգենք, որ «Վրաստանը մեծ է, հզոր ու միասնական», - հայտարարեց վարչապետը եւ հավելեց. «Այսօր մեզ համար մեծ հաղթանակի օր է, մեր երկրի միասնության ու հզորության խորհրդանիշը: Դավիթ Աղմաշենեբեկին այս հաղթանակին հասավ նպատակամղված եւ ջանադիր աշխատանքով, եւ մենք պետք է հիշենք, որ կլինենք միասնական, երբ Վրաստանը հզոր լինի: Ցանկանում եմ Վրաստանը տեսնել առավել հզոր, միասնական, եւ անպայման միավորված», - հայտարարեց վարչապետը:



ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎԵՐՋՆԱԳԻՐ՝ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՎՐԱՑԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Աբխազիայի ներկայիս վարչակազմը, անձնագրման նոր փուլի մեկնարկի կապակցությամբ, վերջնագիր է ներկայացրել Աբխազիայի ազգությանը վրացի բնակչությանը:

2018 թվականից վերացվում են մինչ այդ գործող անձը հաստատող փաստաթղթերը, եւ ազգությանը վրացիները կանգնում են ընտրության առջեւ: Կա՛մ հրաժարվել Վրաստանի քաղաքացիությունից եւ ստանալ աբխազական անձնագիր, կա՛մ

համաձայնվել, այսպես կոչված, «բնակության իրավունքի» հետ, ինչն էլ ավելի է սահմանափակում նրանց իրավունքները:

Վրաստանը աբխազական իշխանությունների նման գործողությունները գնահատեց՝ որպես մարդու իրավունքների կո-

պիտ խախտում եւ տարածքում նույնականացման փոփոխման փորձ: Վրացական կողմը տեղի ունեցածի մասին մտադիր է տեղեկացնել միջազգային հանրությանը:

Նշենք, որ, ստացված տեղեկատվության համաձայն, բռնագավթված Աբխազիայի տարածքում անձնագրման նոր փուլը պետք է ավարտվի 2018 թվականի հունվարի 1-ին:

ԻՐԱՎԱՎԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՄԻՆԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ԱՐՏԱՅԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅԱՆՋ

Վրաստանի գլխավոր դատախազությունը հարցում է ուղարկել մի քանի երկրների, այդ թվում՝ Ուկրաինայի իրավապահ մարմիններին՝ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիում արտահանձնելու վերաբերյալ:

Գլխավոր դատախազությունը Միխեիլ Սաակաշվիլու հարցով բանակցություններ է վարում տարբեր երկրների պետական մարմինների հետ, շարունակվում են անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերը,- ասված

է գլխավոր դատախազության հաղորդագրության մեջ: Նամակում նշվում է, որ Վրաստանի դատախազությունն ուկրաինական կողմին հարցում է ուղարկել՝ Սաակաշվիլուն արտահանձնելու վերաբերյալ, ինչպես նաեւ աս-

ված է, որ Վրաստանի Գլխավոր դատախազությունն ակտիվորեն համագործակցում է Ուկրաինայի Գլխավոր դատախազության հետ:

Նշենք, որ դեռեւս հուլիսի 31-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարել էր ցանկացած երկրից Սաակաշվիլու արտահանձնումը պահանջելու պատրաստակամության մա-

սին, որը նախկին նախագահը, որպես բնակության վայր, կընտրի Ուկրաինայի քաղաքացիությունից զրկվելուց հետո:

Ավելացնենք, որ օրերս Վրաստանի նախկին նախագահ, Օդեսայի մարզի նախկին նահանգապետ Միխեիլ Սաակաշվիլին հայտարարել է՝ սեպտեմբերի 10-ին Ուկրաինա վերադառնալու մտադրության մասին:

ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

ԱՄՆ ՊԵՏՐԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԶԵԿՈՒՅՅԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտը հրապարակել է զեկուցագիր՝ Վրաստանում կրոնի ազատության, ինչպես նաեւ մարդու իրավունքների առումով երկրում ստեղծված իրավիճակի մասին: Փաստաթուղթը հրապարակվել է պետդեպարտամենտի պաշտոնական կայքում:

Ինչպես նշված է զեկուցագրում, չնայած նրա, որ երկրի սահմանադրությամբ ապահովված է կրոնի ազատությունը, եւ դրանով եկեղեցին առանձնացվում է պետությունից, «Օրենքն ու քաղաքականությունը գերադասությունը տալիս են Վրաց Ուղղափառ եկեղեցուն եւ նրան շնորհում այնպիսի արտոնություններ, որոնք կրոնական մյուս խմբերի համար նախատեսված չեն»:

«Տարվա ընթացքում քննարկվել է 19 գործ, որոնցում ընդգրկված են այն

իրավախախտումները, որոնք կատարվել էին կրոնական անհանդուրժողականության հողի վրա: Ոչ կառավարական կազմակերպությունները եւ ժողովրդական պաշտպանի աշխատակազմը վավերացրել են նման իրավախախտումների հետաքննության ոչ բավարար արդյունավետությունը», - նշված է փաստաթղթում:

Փաստաթղթում նշված է նաեւ, որ, չնայած առանձին ուժերի ցուցաբերած դիմադրության, մի շարք դատական որոշ-

ումներ միեւնույն է, ընդունվեցին հօգուտ կրոնական փոքրամասնության, աղոթատների եւ դպրոցների շինարարության հարցով:

Փաստաթղթում անդրադարձ է կատարվել նաեւ Վրաստանի բռնագավթված տարածքներում Աբխազիայում եւ Ցխինվալիի երկրամասում կրոնական գործունեության սահմանափակումների վերաբերյալ:

Ինչպես նշված է փաստաթղթում, կրոնական եւ ոչ կառավարական կազմակերպություններն իրենց մտահոգությունն են հայտնել այն հարցի շուրջ, որ խորհրդային ժամանակահատվածում պետության կողմից բռնագավթված շենքերի վերադարձման ժամանակ առաջնություն-

ընդ տրվել է Վրաց Ուղղափառ եկեղեցուն: ԱՄՆ պետդեպարտամենտի հաշվետվության մեջ ընդգծված է, որ Վրաստանում ԱՄՆ դեսպանը եւ դեսպանության ներկայացուցիչները պարբերաբար հանդիպումներ են ունենում կառավարության ներկայացուցիչների, այդ թվում՝ կրոնի հարցերով պետական գործակալության ղեկավարության, մարդու իրավունքների եւ զեկուցարարի իրավահասարկության հարցերով վարչապետի խորհրդակցանի, փոքրամասնությունների հարցերով նախագահի խորհրդակցանի հետ, որպեսզի նպաստեն կառավարության եւ կրոնական փոքրամասնության խմբերի միջեւ երկխոսության անցկացմանը:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒԱԶ

ԿԸՅ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, առաջիկա տեղական ընտրություններին մասնակցելու ցանկություն ունեցող կուսակցությունների համար, տարածել է տեղեկատվական, հանձնարարական հայտարարություն:


Հայտարարության մեջ նշված է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կանցկացվեն ընթացիկ տարվա հոկտեմբերին: Հետեւաբար, ԿԸՅ դիմում է քաղաքական կուսակցություններին, որ, ընտրություններին մասնակցելու ցանկության դեպքում, վերջիններս անվերապահորեն անցնեն անհրաժեշտ ընթացակարգերը:

Քյունների օրվա նշանակումից առնվազն երեք օրվա ընթացքում (մինչեւ ընտրությունները՝ առնվազն 57 օր շուտ):

Օրենսգրքում կատարված փոփոխությունների համար դյուրացվել են գրանցման համար անհրաժեշտ ընթացակարգերը: Մասնավորապես, կուսակցությունները ԿԸՅ չեն ներկայացնի իրենց կանոնադրության եւ գրանցման վկայականի բնօրինակները կամ նոտարի կողմից վավերացված պատճենները: ԿԸՅ նախագահին հասցեագրած դիմումին պետք է կցված լինի միայն քաղաքացիների քաղաքական միավորման ռեեստրի մինչեւ ԿԸՅ դիմում ներկայացնելը առնվազն 10 օր շուտ ստացած տեղեկանքը՝ հանրային ռեեստրի ազգային բյուրոյից, որտեղ նշված կլինի ղեկավարի կամ ներկայացուցչի ազգանունը:

Ելնելով նրանից, որ մոտ ժամանակներում կհայտարարվի ընտրությունների օրը, ինչը նախատեսում է մինչեւ ընտրությունների անցկացումը 60 օրվա ժամկետի սահմանում, ԿԸՅ քաղաքական կուսակցություններին խորհուրդ է տալիս համապատասխան դիմումով ներկայանալ հանրային ռեեստր՝ վերոնշյալ տեղեկանքի ստացման համար, - ասված է ԿԸՅ հայտարարության մեջ:

Նաեւ ավելացնենք, որ Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, տեղական ընտրություններին մասնակցելու համար, դիմել է այն ընտրողներին, ովքեր, ըստ բնակության վայրի, դուրս են եկել գրանցումից, ում գրանցման ժամկետը կորցրել է ուժը եւ գրանցված են առանց հասցեի նշման կոչով մինչեւ սեպտեմբերի 14-ն անցնել՝ ըստ բնակության վայրի գրանցում կամ նշել բնակության փաստական հասցեն: Քաղաքացիների այդ կատեգորիան կօգտվի որոշակի արտոնություններից, մասնավորապես՝ կազատվի պետական սպասարկումների համար սահմանված սակագնի վճարումներից:



ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻ՝ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՄԵԾ ՀԱՂՈՒՆԱԿԻ

Ասպինձայի ավանում մեծ հանդիսավորությամբ բացվեց 1770 թվականի ապրիլի 20-ին Ասպինձայում տեղի ունեցած պատմական ճակատամարտին նվիրված հուշակոթողը: Այդ օրը վրացական գործերը, էրեկլե երկրորդ թագավորի հրամանատարությամբ, պատմական հաղթանակ տոնեցին թուրք օսմանների բանակի դեմ:

Հուշակոթողի հեղինակն է քանդակագործ Դավիթ Տաբատաձեն: Հուշակոթողի տեղադրման համար ծախսվել է 310 հազար:

«ԹԲԻԼԻՍՈՒՄ» ԿՆՇՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԿԻՆԻ

Այս տարի Վրաստանի մայրաքաղաքը իր ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան» կտոնի հոկտեմբերի 7-ին եւ 8-ին: Ինչպես նշեցին Թբիլիսիի քաղաքապետարանում, այս անգամ էլ տոնը կլինի մասշտաբային եւ կանցկացվի ողջ մայրաքաղաքով: Հիմնական միջոցառումները կանցկացվեն հին քաղաքում, «Նոր Թիֆլիսի» հետիոտն անցումավայրում, Աղմաշենեբելի պողոտայի վրա, Ռիդեի զբոսայգում եւ Թբիլիսիի ծծմբային բաղնիքների շրջանում:

«Թբիլիսոբայի» ավանդույթի համաձայն, կանցկացվեն մշակութային եւ մարտական միջոցառումներ, խոհարարական ցուցահանդես-վաճառքներ, քաղաքի ողջ տարածքով կկազմակերպվեն գյուղատնտեսական շուկաներ:

Թբիլիսիի ավանդական տոնի անցկացման կապակցությամբ, կազմվել է հատուկ հանձնաժողով: Տոնի կապակցությամբ անցկացվելիք միջոցառումների, նախագծերի եւ առաջարկությունների մասին հայտը կարելի է ներկայացնել հատուկ հանձնաժողովին՝ մինչեւ սեպտեմբերի 8-ը, Թբիլիսի, Շարտավայի փողոց թիվ 7 հասցեով:

ՏԱՍՏԻՆԳ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՎՈՐԿԵՑԻՆ «ՆՈՐ ՎՐԱՍԱՆՈՒՄ»

Տասնհինգ սուբյեկտներ հիմնեցին բաց հասարակական-քաղաքական «Նոր Վրաստան» միավորումը: Նոր միավորման մեջ ընդգրկվել են ինչպես քաղաքական կուսակցություններ, այնպես էլ՝ ոչ կառավարական կազմակերպություններ եւ հասարակական ակտիվ գործիչներ: «Նոր Վրաստան» միավորումը շահագրգռված անձանց միավորման կոչ է անում: Այն կրկին դիմում է արեւմտամետ ընդդիմադիր ուժերին՝ միավորվել եւ պրայմերֆի միջոցով հայտնաբերել քաղաքապետի եւ քաղաքի սակրբուլոյի պատգամավորների ընդդիմադիր միասնական թեկնածուներին:

ՏԱՐԱԴԱՄԻ ՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԿՈՒՐԱԸ (18 ՕԳՈՍՏՈՍԻ)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴԱՄ	ՍՈՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈՒՍԻ	2.36	2.42
ԵՎՐՈ	2.765	2.845
ՌՈՒԲԼ	0.0384	0.0424
ԴՐԱՄ	0.0035	0.0053

Օգոստոսի 11-ի համեմատ, դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ՀԱՆԴՊՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օգոստոսի 14-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթևան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ երկրի տարբեր բուհերի ուսանողների հետ եւ նրանց ներկայացրեց Վրաստանի կառավարության խաղաղասիրական քաղաքականության առաջնահերթությունները:

Պետնախարարի հետ հանդիպմանը՝ երիտասարդները ներկայացրեցին հակամարտությամբ օտարացած հասարակությունների միջեւ վստահության վերականգնման եւ հարաբերությունների բարելավման տեսանկյունից իրենց նկատառումները:

- Վստահության վերականգնումը եւ հարաբերությունների բարելավման տեսանկյունից իրենց նկատառումները:

նունը եւ, ընդհանուր առմամբ, խաղաղարար գործընթացում երիտասարդների ներգրավումը մեծ նշանակություն ունի: Հանդիպմանը նրանք ծանոթացան Վրաստանի կառավարության խաղաղարար մոտեցումներին, հաշտեցման եւ ներգրավման քաղաքականության առաջնահերթություններին: Նաեւ մեզ համար մեծ հետաքրքրություն էին ներկայացնում երիտասարդների գաղափարներն ու կարծիքներն այդ կարեւոր հարցի շուրջ: Երիտասարդներն իրենց անկեղծությամբ, շահագրգռվածությամբ ու հետաքրքիր նախաձեռնություններով նշանակալի դեր կարող են խաղալ տվյալ գործընթացում, - հանդիպման ավարտից հետո հայտարարել է Քեթևան Ցիխելաշվիլին:

Ինչպես տեղեկացրել է ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, «Սաղախլո» ավտոմոբիլային եւ Ղազբեգի մաքսային անցումակետերում ծառայության աշխատակիցների կողմից բռնագրավվել է, ընդհանուր առմամբ, շուրջ 200 հաբ թմրամյութ:



ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՌԳՐԱՎԿԵՆ Ե ԶՅՈՉԱԿԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԶԱՐԴԵՐՆԵՆ

Օգոստոսի 17-18-ին Վրաստան-Հայաստան սահմանային «Սաղախլո» ավտոմոբիլային-մաքսային անցումակետում եւ Թբիլիսիի օդանավակայանի մաքսակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աշխատակիցների կողմից, կանխվել է չհռչակագրված թանկարժեք մետաղից պատրաստված զարդեղենի

երկիր ներբերելու փորձը: 356,89 գրամ ոսկե եւ 499,19 գրամ արծաթե, ընդհանուր քաշով զարդեղենի մաքսային արժեքը կազմել է 19943,228 լարի: Վրաստանի հարկային օրենսգրքի 209 հոդվածի 10-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացիները տուգանվել են, ընդհանուր առմամբ, 19,943 լարիով:

Ինչպես տեղեկացրել է ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, «Սաղախլո» ավտոմոբիլային եւ Ղազբեգի մաքսային անցումակետերում ծառայության աշխատակիցների կողմից բռնագրավվել է, ընդհանուր առմամբ, շուրջ 200 հաբ թմրամյութ:

ԵՆԹԱԿՈՒԹՅՈՒՆ

ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ

Նիւնոմինդայի մունիցիպալիտետում շարունակվում է ներշրջանային ճանապարհների եւ քաղաքի փողոցների ասֆալտապատումն ու կարգավորումը: Մասնավորապես, արդեն ավարտվել է Ջիգրաշեն եւ Ղեշտիա գյուղական համայնքների ճանապարհների ասֆալտապատումը, շարունակվում է Նիւնոմինդայի քաղաքային փողոցների վերականգնումը:

Ջիգրաշեն եւ Ղեշտիա գյուղերի ճանապարհների ասֆալտապատումը ֆինանսավորվել է Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից: Ղեշտիայի գյուղական համայնքի 1600 մետր երկարությամբ ճանապարհահատվածի երեսպատման համար հատկացվել է ավելի քան 592 000 լարի: Իսկ 1100 մետր երկարությամբ ճանապարհի երեսպատման համար Կենտրոնական մայրուղուց մինչ Ջիգրաշեն գյուղ հատկացվել էր 493 000 լարի: Այս աշխատանքներն ավարտվել են, եւ ճանապարհները հանձնվել են շահագործման:

Նիւնոմինդա քաղաքում իրականացվում է ասֆալտապատում վեց փողոցներում. Կերցիտվելի, Փիրոսմանի, Կիրովի, Սիկոյան, յուրաքանչյուր փողոցում՝ 350-400 մետր, իսկ Չապաեւի եւ Ճավճավաձեի փողոցներում՝ 300-350 մետր:

Այս նախագծերը նույնպես ֆինանսավորվում են Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից: Բարձրալեռնային շրջանների զարգացման հիմնադրամից նախատեսված է ասֆալտապատել Գոգոլի փողոցը՝ մոտ 700 մետր կտրվածքով: Իսկ տեղական բյուջեից հատկացվել է 100 000 լարի՝ Հայկական փողոցի ասֆալտապատման համար:



ԿՐԹԱԿԱՆ



ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԴՐՈՅՆԵՐՈՒՄ ՈՒՏԱՐԻՆ ԿՍԿՄՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ

2017-2018 ուսումնական տարվա մեկնարկը Վրաստանի համրային դպրոցներում կտրվի սեպտեմբերի 15-ին, ուրբաթ օրը: Ինչպես նշված է «Ընդհանուր կրթության մասին» օրենքում, «Հանրակրթական բոլոր հաստատություններում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 15-ին, եթե սեպտեմբերի 15-ը կիրակի կամ ոչ աշխատանքային օր է, ապա ուսումնական տարին սկսվում է հաջորդ աշխատանքային օրվանից»:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հանրակրթական եւ գիտական ենթակառուցվածքի զարգացման գործակալությունը, ընդհանուր առմամբ, Վրաստանում գործում է 2085 հանրային դպրոց: Ներկա փուլում շինարարական աշխատանքներ են տարվում փոքրաքանակ 13 հանրային դպրոցներում: Առաջին փուլում ուսումնական տարվա համար դրանցից կբացվի մեկ նոր հանրային դպրոց: 2017 թվականի ավարտին կավարտվի եւս հինգ դպրոցի շինարարությունը:

Գործակալության տվյալներով, 22 հանրային դպրոցներում արդեն ավարտվել են վերանորոգման աշխատանքները, 91 հանրային դպրոցներում դրանք շարունակվում են:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԴՐՈՅՆԵՐԸ ԲԱՂԱՔԻ ԴԴՐՈՅՆԵՐԻՉ ԵՏ ԵՆ ՄՆՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գահայտեց ուսումնասիրությունը, այն է, որ Թբիլիսիի կենտրոնական թաղամասերում միջին ցուցանիշը գրեթե համապատասխանում է եվրոպականին: Կարելի է ասել, որ Թբիլիսիի կենտրոնում, թե՛ մասնավոր եւ թե՛ հանրային դպրոցներում ապահովվում են գրեթե եվրոպական կրթություն: Գյուղի դպրոցները բավական չափով ետ են մնում

ուցիչների պակաս: Դրան նպաստեց նաեւ այն, որ վերջին 25 տարիների ընթացքում արմատավորվեց այնպիսի կարծրատիպ, որը հանգեցրեց նրան, որ ո՛չ գյուղերում եւ ո՛չ էլ թաղաքներում ոչ մի երիտասարդ չէր



թաղաքի դպրոցներից: Ինչ խոսք, այնտեղ էլ կան բացառություններ, սակայն, բոլոր դեպքերում, ազգային փոքրամասնությունների դպրոցներն էլ ավելի են ետ մնում՝ անգամ գյուղական դպրոցներից: Դա անմիջապանորեն առնչվում է մանկավարժներին: Գյուղերում բնագիտական առարկաների ուսուցիչների պակասորդ է: Բոլոր գյուղական դպրոցներում զգացվում է ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի եւ կենսաբանության ու

ցանկանում մանկավարժ դառնալ: Եվ թերեւս, առաջին անգամ 2016 թվականին, հենց մեր ջանքերով, շուրջ հազար ուսանող ընդունվեց բանասիրական ֆակուլտետ: Մենք անպայման կհասնենք նրան, որ գյուղերում եւ ազգային փոքրամասնությունների դպրոցներում կվերադարձվի բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրությունը, եւ կրթության մակարդակը կբարձրացվի»,- հայտարարեց Ալեքսանդր Ջեջելավան:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅՈՒՆԵՐԻՆ

Նոր ուսումնական տարեսկզբին երկրի բոլոր առաջին դասարանցիները, որպես նվեր, կստանան Acer ֆիրմայի համակարգիչներ: Համակարգիչներ կստանան նաեւ առաջին դասարանի դասղեկները: Այս տարի նախարարությունը գնել է 53700 նման համակարգիչ: Այս մասին տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հանրակրթական եւ գիտական ենթակառուցվածքի զարգացման գործակալությունը: Նշենք, որ 2017-2018 ուսումնական տարում հանրային դպրոցներում ուսանելու է 50300 առաջին դասարանցի:



ՆՈՐԱՍՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԴԱՏՎԱՏՈՒՄ ԶԱՆՅԱԾ ԵՐԵՒՄՆԵՐԸ ԴԴՐՈՅ ԵՎ ՄԱՆԿԱԴՊՐՏԵՉ ԳԵՆ ԸՆԴՈՒՎԻ



Վրաստանի ողջ տարածքում պարտադիր պատվաստման անցկացման մասին խորհրդարանին ներկայացված օրենսդրական նոր փաթեթով նախատեսվում է, որ պատվաստում չանցած երեխաները չեն ընդունվելու դպրոց եւ մանկապարտեզ: Սույն նախաձեռնությամբ հանդես է եկել հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը: Կենտրոնի համոզմամբ, վարակիչ հիվանդությունների կանխման համար, պատվաստումների քանակը հարկ է ավելացնել: Չնայած նրա, որ բժիշկները պաշտպանում են այս նախաձեռնությունը, օրենքն ունի նաեւ հակառակորդներ: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունները գտնում են, որ պատվաստման պարտադրումը որոշակիորեն սահմանափակում է մարդու, մասնավորապես՝ երեխայի ծնողների իրավունքները:

Հիշենք, որ պարտադիր պատվաստման մասին օրենքը երկրի ողջ տարածքում հնարավոր է՝ գործի հաջորդ տարվանից:

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԴՐՈՅՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍՄԺԱՄԵՐԸ ԿՎԵՐԱԿԱՆԳԵՆ

Ինչպես նշեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, երկրի հանրային դպրոցներում աշխատանքի դասաժամերը վերականգնվելու են: Նրա խոսքով, նոր ուսումնական տարվանից աշխատանքի դասաժամերը կանցկացվեն պիլոտային կարգով, իսկ երկարաժամկետ հեռանկարում այն կներդրվի բոլոր դպրոցներում: «Թե ինչպես կկոչեն այդ դասաժամերը, դժվարանում են ասել, թեպես, բովանդակությամբ կլինեն աշխատանքային: Մենք մտադիր ենք դա հանձնարարել մասնագիտական քուլեջներին: Կարծում են, որ սա կարելու էր քայլ կլինի մասնագիտական կրթությանը նպաստելու առումով: Մասնագիտական քուլեջների ներկայացուցիչները կլինեն դպրոցներում, կծանոթանան կոնկրետ դպրոցների հնարավորություններին»,- հայտարարեց կրթության նախարարը՝ հավելելով, որ աշխատանքի դասաժամերը յուրատեսակ լծակ են դառնալու մասնագիտական կրթության ժողովրդականացման ուղղությամբ:



ՄՇԱԿՎՈՒՄ Է ՍԿՍՆԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՈՐ ՀԱՍԱԿԱՐԳ

Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, գերատեսչությունն աշխատում է սկսնակ ուսուցիչներին աշխատանքի ընդունելու նոր համակարգի շուրջ: «Դպրոց նոր ուսուցիչ մուտքը արդեն գործող, որոշակիորեն նշանակում է, որ ինչ-որ մեկը գրկվելու է դասաժամերից: Ուստի, դա որոշակի արգելք է նոր ուսուցիչ ընդունման համար: Մենք մտադիր ենք մանկավարժական ֆակուլտետների շրջանավարտներին դասաժամեր տալ այն դպրոցներում, որտեղ ուսուցիչների պակաս է, առանձնապես՝ գյուղական եւ ազգային փոքրամասնությունների դպրոցներում: Եթե դպրոցում կա մաթեմատիկայի հարյուր դասաժամ, իսկ մենք ցանկանում ենք ընդունել նոր ուսուցիչ, մենք կավելացնենք այդ դասաժամերը, եւ դրանք կլինեն դասաժամեր, որոնք կանցկացվեն երկու մանկավարժների մասնակցությամբ, այսինքն՝ փորձառու մանկավարժն ինչ-որ ժամանակահատված դասերը կանցկացնի սկսնակ ուսուցիչի հետ»,- հայտարարել է Ալեքսանդր Ջեջելավան:

ԴԻՍՈՐԳՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԿՀՐԱԴԱՐԱԿՎԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 27-ԻՆ

Ինչպես հայտարարեց գնահատականների եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, այդ օրը հայտնի կդառնան նաեւ դրամաշնորհային մրցույթների արդյունքները:



- Ամենայն հավանականությամբ, արդեն օգոստոսի 27-ին մեզ մոտ պատրաստ կլինեն բուհի ընդունելության եւ դրամաշնորհային մրցույթի արդյունքները: Օգոստոսի 15-ին սկսվեց աշխատանքների ուղղումը, որոնց թիվը բոլոր առարկաներից կազմում է շուրջ 1900: Սա այնքան էլ մեծ թիվ չէ, եւ հուսով են, որ սխալների ուղղումն առավելագույնս կավարտվի տասն օրում, ապա մեզ կպահանջվի մի քանի օր, քանի որ ստանալու ենք կոնկրետ տեղեկատվություն հավաստագրման կենտրոնից, թե ով ավելի վաղ է ստացել դրամաշնորհ, եւ ում ազգանունը պետք է հանել դրամաշնորհային մրցույթից: Հուսով են, որ այդ արդյունքների հանրագումարը պատրաստ կլինի օգոստոսի 27-ին»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

ՖՈՒՏԲՈՒՆ ՍԵԿՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԴՐՈՅՆԵՐՈՒՄ

Ինչպես հայտարարել է Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլին, ընթացիկ տարվա սեպտեմբերից երկրի ավելի քան հազար դպրոցներում առաջին եւ երկրորդ դասարանի երեխաները կկարողանան անվճար հաճախել ֆուտբոլի սեկցիաներ: Նրա տեղեկատվությամբ, սպորտի ուսուցիչները դրա համար հատուկ վերապատրաստում են անցել:

Միաժամանակ, ինչպես նշեց Լեւան Կոբիաշվիլին, 2018 թվականից կսկսվի գործել մանկական ֆուտբոլի զարգացման ծրագիր:

ԱՄԵՆ ԸՄԲԱԹ ԽՆՉՈՐ՝ ԱՆԱԿԵՐՏԵՐԻՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը այս տարի մեկնարկում է ուսումնական յուրաքանչյուր շաբաթ դպրոցներում «խնձոր բաժանելու» նորամուծությունը: Ինչպես նշեցին գերատեսչությունում, «խնձորի բաժանման» գործընթացը կանցկացվի 1000 եւ ավելի աշակերտ ունեցող դպրոցներում: - Չնայած նրա, որ նախագիծը բարդ է միաժամանակ թանկարժեք հաճույք է, մենք այն գործարկելու ենք: Նախագիծն նպատակն է, որ դասամիջոցներին երեխաները ստանան խնձոր, քանի որ, ըստ ապացուցված փաստի, խնձորը առավել քան օգտավետ միրգ է,- հայտարարեց կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան:

Աշակերտները կստանան մեկական խնձոր: Աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 40-60 հազար: